

ՄԱՍ II
PART II

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

2009-2013

QUARTERLY NATIONAL ACCOUNTS
OF ARMENIA

Ներածություն

Եռամսյակային ազգային հաշիվներն (հետայսու՝ ԵԱՀ) ինտեգրացված եռամսյակային ժամանակագրական շարքերի համակարգ են: ԵԱՀ-ի տվյալները կարևոր դեր են խաղում տնտեսական և ֆինանսական հիմնավորված ծրագրերի մշակման և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողություն սահմանելու ժամանակ:

ԵԱՀ-ի կազմման հիմնական նպատակն է ստանալ տնտեսության մեջ ընթացիկ փոփոխությունների վերաբերյալ ավելի արդիական պատկեր, քան տալիս են տարեկան ազգային հաշիվները (հետայսու՝ ՏԱՀ) և ավելի ամբողջական, քան ապահովում են առանձին կարճաժամկետ (ամսական) ցուցանիշները: ԵԱՀ-ն միջանկյալ դիրք է զբաղեցնում ՏԱՀ-ի և առանձին կարճաժամկետ ցուցանիշների միջև:

ԵԱՀ-ն բազային տվյալներ է ներկայացնում գործարար ակտիվության փուլերի ու տնտեսական մոդելավորման վերլուծության համար: Բացի այդ, ԵԱՀ-ն առավել ճշգրիտ է արտացոլում դինամիկ փոխկապակցվածությունը (առաջանցիկ զարգացում, ուշացում) և չորս անգամ ավելի դիտարկումներ է պարունակում, քան ՏԱՀ-ի տվյալները:

Սակայն, կապված տվյալների առկայության, ժամանակի և ռեսուրսների սահմանափակության հետ, ԵԱՀ-ն ՏԱՀ-ի համեմատությամբ այդքան էլ ընդգրկուն չէ: Վերջինիս առավելությունն այն է, որ անհրաժեշտ տեղեկատվություն է ներկայացնում տնտեսության կառուցվածքի և երկարաժամկետ միտումների վերաբերյալ, այլ ոչ թե տնտեսական փուլերը դիտարկելու համար:

Եռամսյակային հաշիվները կազմվում են ավելի սահմանափակ կարճաժամկետ ցուցանիշների խմբի հիման վրա: Ազգային հաշիվների տարեկան տվյալները հիմնված են ավելի ճշգրիտ վիճակագրական ցուցանիշների վրա և ընդգրկում են առավել մանրամասնեցված տեղեկատվություն և վիճակագրական աղբյուրների ավելի լայն անվանացանկ: Այդ իսկ պատճառով, ԵԱՀ-ի տվյալները փոխկապակցվում (համապատասխանեցվում) են ՏԱՀ-ի հետ՝ տարեկան ելակետային տվյալների ճշգրտման հետ միաժամանակ ճշգրտվում են նաև եռամսյակային տվյալները:

ՀՆԱ-ի եռամսյակային տվյալները կազմվում են փուլերով՝ առաջին գնահատականը նախնական տվյալներն են, երկրորդ գնահատականը՝ բազային տարվա հաշվետու տվյալների հիման վրա ճշգրտված տվյալներն են, երրորդ գնահատականը կատարվում է տարեկան տվյալների հաշվետու տվյալների հիման վրա ճշգրտվելուց հետո՝ համապատասխանեցման միջոցով (Տե՛ս ՀՆԱ վերանայման ժամանակացույցը՝ <http://www.armstat.am/file/Timetable/Timetable%202014-am.pdf>):

ՀՆԱ-ի հաշվարկն ազգային հաշիվների բոլոր համակարգերում կարևորագույն դեր ունի, իսկ ՀՆԱ-ի տարանջատումն ըստ բաղադրիչների իրենից ներկայացնում է ԵԱՀ-ի կազմման առաջին արդյունքներից մեկը: Ընդհանրապես, տարբերում են ՀՆԱ-ի հաշվարկի երեք եղանակ՝ արտադրական, ծախսային և եկամուտների ձևավորման: Վերջինս Հայաստանում մշակվում է միայն տարեկան մակարդակով: Եռամսյակային կտրվածքով ՀՆԱ-ն հաշվարկվում է դեռևս միայն երկու եղանակներով՝ արտադրական և ծախսային:

Քանի որ տնտեսության մեջ կարճաժամկետ փոփոխությունները տեղի են ունենում, հիմնականում, պահանջարկի փոփոխության ազդեցությամբ պայմանավորված, ՀՆԱ-ի տարանջատումն ըստ ծախսերի հնարավորություն է տալիս ստանալ բացառիկ կարևոր տեղեկատվություն՝ մակրոտնտեսական քաղաքականության մշակման և տնտեսական միտումների վերլուծության, ինչպես նաև կանխատեսումների համար:

ՏԱՀ-ի և ԵԱՀ-ի շրջանակներում շատ երկրներում (ինչպես նաև Հայաստանում) լայն կիրառում ունի ՀՆԱ-ի հաշվարկի արտադրական եղանակն, ինչը բացատրվում է կարճաժամկետ վիճակագրության ավանդական օգտագործմամբ, ինչպես նաև արտադրանքի թողարկման, միջանկյալ սպառման և ավելացված արժեքի վերաբերյալ առավել լայն տեղեկատվության ստացման հնարավորությամբ:

ՀՆԱ-ի կազմման ծախսային եղանակը համեմատաբար ավելի քիչ կիրառում ունի, քան արտադրական եղանակը, ինչը բացատրվում է ծախսային հոդվածներով ելքային տվյալների

ընդգրկման, առկայության և ստացման ժամկետների համաձայնեցման խնդիրներով: Ծախսային մեթոդով հաշվարկներում, սովորաբար, հողվածներից երկուսն ունեն վարչական տվյալների աղբյուրներ՝ արտաքին առևտուրը և պետական կառավարման մարմինների սպառումը: Հաշվարկների տեսանկյունից ավելի աշխատատար են, ինչպես նաև պահանջում են լրացուցիչ հաշվարկներ, սովորաբար, տնային տնտեսությունների վերջնական սպառման, տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների, հիմնական կապիտալի համախառն կուտակման, նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխության ծավալների և, հատկապես արտաքին առևտրի իրական ծավալների վերաբերյալ տվյալները:

Արտադրական եղանակով ստացված ՀՆԱ-ի ցուցանիշը հնարավորություն է տալիս ՀՆԱ-ն բաշխել ըստ ծախսային հողվածների, նույնիսկ եթե ծախսային կտրվածքով տվյալները ոչ ամբողջական են: Առկա տվյալները հնարավորություն են տալիս գնահատել հիմնական ծախսային հողվածները, իսկ բացակայող հողվածները կարելի է ստանալ որպես մնացորդային մեծություն:

Հայաստանում արտադրական և ծախսային եղանակներով ՀՆԱ-ի գնահատումը կատարվում է մեկը մյուսից անկախ, ինչը հնարավորություն է տալիս ստուգել ՀՆԱ-ի հաշվարկների արժանահավատության աստիճանը, ինչպես նաև ելքային տվյալների ընդգրկվածությունը և որակը:

ՀՆԱ-ի ինչպես տարեկան, այնպես էլ եռամսյակային տվյալները գնահատվել են ընթացիկ, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի, ինչպես նաև մշտական (բազիսային տարվա միջին տարեկան) գներով: Սկսած 2011թ. առաջին եռամսյակից, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, առաջնորդվելով Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) «Եռամսյակային ազգային հաշիվների» մեթոդաբանությամբ, ՀՆԱ-ի եռամսյակային տվյալների իրական ծավալները գնահատում է (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համադրելի գներով գնահատելու փոխարեն) նախորդ տարվա միջին տարեկան գներով, և, որի դեպքում բազային տարի է համարվում նախորդ տարին, իսկ իրական ծավալի ինդեքսները հաշվարկում է կիրառելով «տարեկան ծածկման մեթոդը», որը հնարավորություն է ընձեռնում ստեղծել շղթայակապ իրական ծավալի ինդեքսների ժամանակագրական շարքեր մինևնույն բազային տարվա միջին եռամսյակային ցուցանիշի նկատմամբ: Ներկայումս ՀՆԱ-ի եռամսյակային ժամանակագրական շարքերը նախորդ տարվա միջին տարեկան գներով և իրական ծավալի շղթայակապ ինդեքսներն առկա են 2009 թվականից: Վերջիններիս կիրառմամբ հնարավոր է դառնում հաշվարկել ՀՆԱ եռամսյակային ցուցանիշները 2008թ. միջին տարեկան գներով՝ բազմապատկելով իրական ծավալի ինդեքսը 2008թ.-ի միջին եռամսյակային ծավալով: Պետք է նշել, որ բազային տարվա գներով արտահայտված ՀՆԱ-ի բաղադրիչների գումարը հավասար է ՀՆԱ-ին միայն նախորդ տարվա միջին տարեկան գներով արտահայտված ծավալների դեպքում, իսկ երկու և ավելի տարիների հետընթաց շարքերի դեպքում դրանք հավասար չեն լինում և համաձայն ԵԱՀ մեթոդաբանության, չպետք է համահարթեցվեն ՀՆԱ-ին, որպեսզի չխեղաթյուրվեն առանձին բաղադրիչների իրական միտումները:

Եռամսյակային հաշիվներում ընդունված են նույն դրույթները, հասկացությունները, դասակարգումները, սահմանումները, կառուցվածքը, հաշվարկի կարգը և եղանակները ինչ տարեկան ազգային հաշիվներում և համապատասխանում են ԱՀՀ-93-ի հիմնական դրույթներին:

ԱՀՀ-93-ի մեթոդաբանության հիմնական դրույթներն առավել մանրամասն ներկայացված են Հայաստանի ազգային հաշիվներ (աղյուսակներ, մեթոդաբանություն, վերլուծություն), 1990-1997թթ. վիճակագրական ձեռնարկում:

Introduction

Quarterly national accounts (hereinafter referred as QNA) are a system of integrated quarterly time series. Data on quarterly national accounts play an important role in elaboration of economic and financial programs and monitoring of their accomplishment.

Basic objective of compiling QNA is to get more actual picture of current changes in economy than that got through annual national accounts (hereinafter referred as ANA) and to get more complete picture, than that got through the separate short-term (monthly) indicators. QNA occupies a position in-between ANA and some short-term indicators.

QNA represent base data on analysis of business activity stages and economic modelling and play a particular role in accounting upon high inflation. Besides, QNA reflect more precisely the dynamic coherence (advanced development and delay) and include observations four times more than ANA data.

Nevertheless, due to constraints related to data availability, time and resources, QNA is not so complete than ANA. Advantage of the later is that it more gives necessary information on economic structure and long-term tendencies, but not information for observing economic stages.

Quarterly accounts are compiled on more limited short-term indicators group. Annual data on national accounts are based on more precise statistical indicators and cover more detailed information and larger list of statistical indicators. Therefore, QNA data are linked (coordinated) with ANA – quarterly data are also revised upon revision of annual initial data.

Quarterly GDP estimates are processed by the stages – the first estimate is preliminary data, the second estimate is data revised on the reporting data of base year, the third estimate is made after revising annual data based on the reporting data through conformity (See revision timetable of GDP <http://www.armstat.am/file/Timetable/Timetable%202014-en.pdf> :

Calculation of GDP has the most important role in all systems of national accounts, and breakdown of GDP into components is one of the first outcomes of QNA compilation. Usually there are three methods of GDP calculation - production, expenditure and income generation, the later in Armenia is processed at the annual level only. At the quarterly level the GDP is still calculated by the first two methods – production and expenditure.

Since the short-term changes in the economy mostly take place stipulated by the changes in demands, breakdown of GDP by expenditures allows to receive exceptional important information for macroeconomic policy making and analysing of economic tendencies, and forecasts as well.

Within the framework of ANA and QNA production-based GDP is mostly used in many countries (as well as in Armenia), that is explained by traditional use of short-term statistics, as well as by the possibility to receive more complete information on output of product, intermediate consumption and value added.

Expenditure-based GDP is used less than production-based GDP; it is explained by the problems related to the coverage, availability and conformity of submission deadlines of output data by expenditures. In the calculations based on expenditure approach, usually two categories have administrative data sources – external trade and Government consumption. With regard to calculations, the data on the volumes of household final consumption, non-profit institutions serving households, gross fixed capital formation, changes in inventories and particularly real volumes of external trade are usually hard and require extra calculations. Overall production-based GDP indicator enables to break GDP by expenditure items, even if the data breakdown by expenditures are not complete. The existing data enables to evaluate main expenditure items, while the absent ones can be received as a residual value.

In Armenia production-based and expenditure-based GDP estimates are made independently, that enable to check the reliability of GDP calculations, as well as output data coverage and quality.

Both the annual and the quarterly data have been estimated at current prices, at prices of the corresponding period of the previous year, as well as at constant (average annual of base year) prices. Following the IMF methodology of «Quarterly national accounts», the real volumes of quarterly GDP are estimated at average annual prices of the previous year (instead of comparable prices of the same period of the previous year) beginning from 1-st quarter of 2011. In this case, as the base year is adopted previous year and real volume indices are calculated applying «annual overlap method», which allows to create real volume chain-link indices time series to the average quarterly indicator of the same year.

At present quarterly GDP data series at average annual prices of the previous year and real volume chain-link indices time series are available from 2009. Applying the latter it is possible to calculate quarterly indicators of GDP at average annual prices of 2008 multiplying real volume indices with average quarterly volumes of 2008. It should be noted that the sum of real volumes of GDP components at base year prices is equal to GDP only in the case of volumes at average annual prices of previous year. For two or more back years, they are not equal to GDP and according to the QNA methodology; they should not be equal to GDP so as not to distort the real trends of separate components.

In the quarterly accounts the same provisions, concepts, classifications, definitions, structure, calculation rules and methods are used, as in the annual national accounts and correspond to the basic provisions of the “System of National Accounts”.

Basic provisions of methodology of the System of National Accounts are presented in details in the statistical handbook “National Accounts of Armenia (tables, methodology, analysis) for 1990-1997”.